

Հ Ե Լ Է Ն Է

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ՀԱՆՐԷՍՍ

(Շար. տես. Բզմ. 1919 էջ 357)

Տ Ե Ս Ի Լ Բ.

ԱՐԴՈՒԱՐԴ, ԱՐՏԱԽԱՋԴ

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուսի)

Ո՛վ դիժ, քիչ հարուած որդւոյս կը պատրաստեմ:

ԱՐՏԱԽԱՋԴ (վազելով հօրը ձեռքը կը համբուռէ)

Օրհնեալ լիցին երկինք, հայր իմ, որովհետեւ զքեզ ողջ և առողջ միտանգամ հայրենեացդ և իմ գիրկս կը դարձընեն:

ԱՐԴՈՒԱՐԴ

Արտաւազդ, զքեզ ժամ մ'առաջ տեսնելու փափաքս և պէտք հայրենացս զիս հոս հասնելու փութացուցին: Իսկ դու ալ ճիշդ ատենին կուգաս զի ես ալ զքեզ կը խնդրէի, որպէս զի այսօր ամենահարկաւոր և ծանր նիւթոյ մը վրայ հեռդ խօսիմ. միով բանիւ հայրենասիրութիւնդ և որդիական հնազանդութիւնդ այսօր պիտի փորձեմ:

ԱՐՏԱԽԱՋԴ

Այդ խօսքդ զիս իրաւամբ կը զարմացնեն, հայր. զի դու քաջ ևս զիս կը ճանչնաս. հա՛գիւ թէ յարբունս հասեալ, զիս երիտասարդական խօլ զբօսանքին զրկելով, հայրենեացս համար կեանքս նուիրեցի. իր վտանգն մոռցնել տուաւ ինձ մասնաւոր հոգերս և քու քովդ, աչացդ առջև, Հայաստանի թշնամեաց դէմ պառտերազմիլ և յաղթել օտդրեցայ: Հոս միտքս՝ իմ ներքոյս հիստել չ'է, հայր, սակայն սա վէրքս բաւական կը յայտնէ հայրենակցացս իմ անցուցած վաղքս: Իսկ եթէ դարձեալ հարկն պահանջէ, պատրաստ եմ նոյնպիսի փառաւոր զարդերով մարմինս պնենլ. ուստի հնազանդութեանս նկատմամբ երբեք մի տարակուսիր. հրամայէ՛, իսկոյն սիրտս և բազուկս պատրաստ են հնազանդելու քեզ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ես ալ գիտեմ թէ ինչպիսի որդւոյ մը հայրն եմ, սակայն...

ԱՐՏԱԽԱՋԴ

Սակայն...

ԱՐԴՈՒԱՐԴ

Կ'ըսէ՞իր ուրեմն թէ սիրտդ ալ իմ հրամանացս պիտի հպատակի:

ԱՐՏԱԽԱՋԴ

Այո՛, միթէ կը տարակուսիմ հայր. տարա՛կոյսն միայն ինձ անհնարին նախատիք է... Բայց խռովեալ զքեզ կը տեսնեմ. աչք քո աչեւ ըստ խոյս կուտան. հազի թէ խօսք մը սկսած, զայն իսկոյն կ'ընդմիջես. հետի այդ տաղնապն. ինչ նոր դէպք հոս կը պատահին... Բնչպէս մեկնեմ այդ լուսթիւնդ, հայր իմ. որ չար և յաշարկոտ լեզու զիս առջևդ արատելով, վստահութիւնդ ինձմէ կը բառնայ... Ինչ ունիս:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ո՛չ ինչ Արտաւազդ. սակայն կը տեսնեմ որ ատենէ մը ի վեր մտերմութիւնդ և բարեկամութիւնդ կրկնապատիկ կ'աւելնայ Նեոպոլոմէոսի և Հելէնէի հետ:

ԱՐՏԱԽԱՋԴ

Այո՛ հայր, զայս չ'եմ ժխտեր:

ԱՐԴՈՒԱՐԴ

Պէտք է որ այդ մտերմութիւնդ չափ մ'ունենայ... մանաւանդ թէ հարկ է որ բոլորովին զազրի:

ԱՐՏԱԽԱՋԴ

Ի՛նչ կ'ընես հայր...

ԱՐԴՈՒԱՐԴ

Ձը մոռնալու ենք թէ անոնք Մակեդոնացի անիծեալ ցեղէն են, ուստի և են բնականապէս մեր հայրենեաց թշնամի և մեր գերութեան շղթայից հեղինակներն:

ԱՐՏԱԽԱՋԴ (մեկուսի)

Ի՛նչ կը լսեմ ո՛վ երկինք... (Քարճը) Այլ երբեմն դու իսկ հայր, դու ինձ կը յորդորէիր ևս առաւել պնդելու բարեկամութեան զօրը. գիշտ. պոլոմէոսն եղբայրդ կը կոչէիր, չքնադագեղն և առաքինին Հելէնէ, դստեր գգուանքն և անունը քննէ կ'ընդունէր: Ուստի՛ ապա այդ անակնկալ և յանկարծական փոփոխութիւնն հայր. միթէ կը պահանջէս որ մէկէն այդպէս իրենց թշնամի ձեւանամ, և իրենց գգուող ձեռաց մէջ յանկարծ ապերախս իժ մը դառնալով զիրենք խայթեմ յանգագատից:

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո՛... զի հարկ է:

ԱՐՏԱԽԱՋԴ

Այո՛... Ինչ մահազուշակ բառ... ո՛վ թշուառ Հելէնէ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Բաւական հեծեց Հայաստան օտարի լուծին տակ Աղեքսանդր ալ չիք ի միջի... Իր վատ տեղակալքն

բռնաբար կը տիրեն իւր հսկայ ժառանգութեանն վրայ, և առտնին կոխենեով զիրար կը ստատակեն: Բնաւ չը՛վկայեր քու սիրտդ ալ, թէ Հայք ուրիշ ճակատագրի, ուրիշ բաղդի համար ծնած են. դու ազատ ծնար որդեակ իմ. իսկ այսօր լուծ մը պարանոցդ կը ճնշէ, անարգար շղթայք քու և հօրդ ձեռքը կը պնդեն: Ուստի ժամ է օգուտ քաղել Մակեդոնացւոց երկպառակութենէն, և երբ ուրիշ ազգեր իրենց բռնաւորքը կը հայածեն որպէս զի ազատութեան դրօշակը բարձրացրին, պէտք չ'է՝ որ Հայք ամէն բանի մէջ առաջինք՝ երկրորդ մնան այդ մասին մէջ: Մեր ազատութեան օրն հասած է և այն վաղուան օրն է:

ԱՐՏԱՒԱՋԴ (խնդրեանամբ)

Մեր ազատութեան օրն... ո՛հ ինչ աւետիս:

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո, այս գիշեր Հայաստանի ամէն կողմը և Արմաւիրի մէջ, Մակեդոնացւոց գերեզմանքն կը փորուին:

ԱՐՏԱՒԱՋԴ

Մակեդոնացւոց գերեզմանքն... սակայն Նէոս պտղովեոս... Հելէնէ...

ԱՐԴՈՒԱՐԴ

Յմէնուն ալ վերջին օրն հասած է:

ԱՐՏԱՒԱՋԴ (մեկուսի)

Արդարադատ դիք, ո՛ք չես տեսք ինձ. (բարձր) իսկ դու հայր, դու այդ տեղութիւն և անիրաւ հրամանը կու տաս:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ես կուրօրէն կը հնազանդիմ Մերակուտին բարձրագոյն հրամանացն: Իսկ այդ միջոցն ի գործ դնելու համար զիս և զքեզ ընտրած է. ծերակոյտն մեր երկուքին քաջութեան և հայրենասիրութեան կը յանձնէ Հայաստանի ազատութեան բաղդը:

ԱՐՏԱՒԱՋԴ

Ձե՛զ և զԲՍ... իսկ դու ընդունեցար այդ պաշտօնը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Մերժելն անհնարին էր. իսկ որպէս զի հայրենատեան և վատ չ'երևամ, յանձն առի և երգողընցայ:

ԱՐՏԱՒԱՋԴ

Երգողընցար...

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո, երգողընցայ լիովին կատարելու պարտքս և պաշտօնս. երգողընցայ նաև քու հնազանդութեանդ և հուստարմութեանդ նկատմամբ:

ԱՐՏԱՒԱՋԴ

Ի՛մ հնազանդութեանս...

ԱՐԴՈՒԱՐԴ

Միթէ կրնայի՞ տարակուսիլ... զի ե՛ հսկառակողն և՛ Մակեդոնացւոց ձեռնտուն՝ դաւաճան և մատնիչ պիտի սեպուի հայրենեաց:

ԱՐՏԱՒԱՋԴ

Դաւաճան և մատնիչ...

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո, դաւաճան և մատնիչ հայրենեաց. իսկ այնպիսին ի մահ պիտի դատապարտուի: Բայց դու փոխանակ վշտանալու ուրխացի՛ր մանուշակեղ հետս Արտաւազգ. զի ո՛րչափ տարիներէ ի վեր Հայաստանն անձկանցից այդպիսի օրուան մը կ'սպասէր. ուստի անողք այս գիշեր խաւաւումս գերեզմանի մէջ պիտի մտնան, իսկ մենք վաղիւն ազատութեան տօնը պիտի կատարենք: Այլ ի՞նչ գործ Հրանտ իշխանը գէպի հոս կ'ուղղէ:

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐԴՈՒԱՐԴ, ԱՐՏԱՒԱՋԴ, ՀՐԱՆՏ

ԱՐԴՈՒԱՐԴ

Հրանտ ի՞նչ լուր:

ՀՐԱՆՏ

Տէ՛ր իշխան, ծերակոյտն զքեզ իւր քովը կը հրաւիրէ, որպէս զի հայրենեաց վրէժխնդիր սուրբ հանդիսաւորապէս քու ձեռքդ յանձնէ. դարձեալ ահաւոր գործոյն սկիզբն տալէն առաջ, կը խնդրէ հետդ խորհրդակցիլ, որպէս զի ճշտութիւնն պաշտօնի:

ԱՐԴՈՒԱՐԴ

Լաւ. անաւասիկ կը փութամ. (Մատաւազդիկն որ մտատանջ կեցած է) Արտաւազգ, լաւ ըմբռնէ ըսածս. երբ արեն հորիզոնին վրայ խոնարհելով ստուերն երկրիս վրայ տարածի, իսկոյն հոս գտնուելու ես, որպէս զի հրամանս ընդունիս: Երթա՛ք Հրանտ: (կ'ըլլան)

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐՏԱՒԱՋԴ (առանձին)

Ի՛նչ լսեցի թշուառականս, և հօրս բերնէն... Ինչպէս երկինք չըկործանեցան վրաս... սակայն կարծեցի որ երկիրս կը սարսէր ոտիցս տակ... հա, իցէ թէ բացուելով զիս կու տար... Ինչ որ, արշէկ փքին յանկարծ սրտիս մէջ վարսեցաւ: Ի՛նչ լսեցի, Նէոպաղոմէոս և Հելէնէ պիտի մեռնին... սոքա նախ զոհ պիտի ըլլան Հայաստանի ազատութեան... կարծեմ որ սա պատերն ալ

դեռ ականջիս մէջ կ'որոտան այդ բարբարոս հրամանը՝ թէ «պիտի մեռնին»։ Դեռպտողմէնոս յանցաւոր իցէ թերևս իւր կասկածելի քաղաքավարութեամբն, սակայն դժուարն, սակայն անմեղն Հելէնէ... միթէ յանցապարտ իցէ այն անմեղ և գեղեցիկ հրէշտակն։ Թող հեղեղաբար վազէ Մակեդոնացւոց արիւնին, եթէ սովաւ աւազին և աւերակաց մէջէն դէպ ի վեր պիտի կանգնի ազատութեան դրօշակն Հայոց։ այլ միթէ գետնաքարէլ պիտի մնայ, եթէ Հելէնէի քանի մը կաթիլ արեան ինայութի։ Ո՛հ, անգութ հայր։ սակայն ծերակոյտն ևս անագորոյն։ միթէ ապա, ուժք զանգ երկնեցին, միթէ և դուք հայր չէ՞ք պաշտպան։ Ինչպէս յաղպիտի դժնդակ խորհուրդ մը կրցաք յղանալու և զայն ի գործ դնելն որու չեցիք։ Ա՛հ անգութ վագրեր։ միթէ չգտնուեցաւ ձեր մէջ մէկն՝ որ գթութեան բառ մը հնչէր... Իսկ իբր թէ այդ բաւական չ'ըլլար, հայրս և զիս ալ դահիճ կը կարգէք ձեր դաւաճան վճռոյն։ Միթէ ձեռք իմ այն ազնիւ կենաց թելը պիտի կտրեն... ա՛հ... բայց ինչու անմեղի մը արիւնը թափելու համար իմ ձեռքս զինել կը խնդրէք։ Ինչ էր ապա իմ յանցանքս որ այդ պաշտօնը ինձ կը յանձնէր...։ Ո՛ սիրեցեալդ իմ Հելէնէ, երբ անկասկած և ժպիտի դէմք քո ի գիրկս իմ պիտի վազես, սա զազաններն կը խնդրեն որ հոն սուր մը գտնաս, որուն վրայ սիրտդ ի մահ բեւեռի։ կը պահանջեն որ սիրականիդ ձեռքէն մեռնիս, որպէս զի հայրենասէր ըլլալս ցուցընեմ, եթէ զքեզ սպաննեմ, միթէ կ'ապրիմ ես աշուհհետ։ Իսկ եթէ քեզ խնայեմ, իբրեւ մատնիչ և դաւաճան հայրենեաց՝ զլիառաման բեռն ինձ կ'սպասէ։ Երկինքը, Ինչ խաւար յանկարծ աչքեր և հոգիս միանգամայն կը պաշարէ... սա, կայն եթէ մահն անխառնելի է, ինչու դահճին տապաւոր պիտի ընտրեմ... կը նախադասեմ մեռնիլ իմ ձեռքէն։ (Սիրտը կը քաշէ որպէս զի զինքն գտրնէ, Հելէնէ նկատ վագրելով քաղաքը կը բռնէ)

ՏԵՍԻԼ Ե.

ԱՐՏԱՒԱՋԻ, ՀԵԼԷՆԷ

ՀԵԼԷՆԷ

Ո՛վ դէք... Արտաւազդ, Ինչ կ'ընես (սուրբ Զնաքէն յափշտակելով գետին կը ննտէ)

ԱՐՏԱՒԱՋԻ

Ո՛վ ես դու, որ զիս ի գերեզման ինչալէն արւզիւի կը խնդրես։

ՀԵԼԷՆԷ

Ա՛հ... միթէ չ'եմ ճանչնար քու Հելէնէդ։

ԱՐՏԱՒԱՋԻ

Հելէնէ... (մեկուսի) Եվ երկինք։

ՀԵԼԷՆԷ

Բայց որպէս զի սիրտս հանդարտի, ըսէ՛ շուտ, Ինչ կ'ընէիր հոս առանձին։

ԱՐՏԱՒԱՋԻ

Ի՞նչ կ'ընէիր... ոչինչ սիրեցեալդ իմ Հելէնէ։

ՀԵԼԷՆԷ

Ոչինչ... միթէ չըտեսայ որ սիրտդ ծակել կը խնդրէիր։ Ինչ գործ ունէր ձեռքիդ մէջ սա մահազոյգ երկակաց։

ԱՐՏԱՒԱՋԻ

Սիրեցեալդ իմ Հելէնէ... հաւտա՛ ինձ...

ՀԵԼԷՆԷ

Երկինք, ինչպէս այլալայած ես և տօգոյն, ցուրտ քրտինք ճակատդ կ'ողողեն, մազերդ զլիւռող վրայ բարդ ի բարդ... ա՛հ, ինչ դաժան նայուածք սա երկաթին վրայ կ'զգես... խոցեալ իցես արդէն, սիրելիդ իմ Արտաւազդ... չե՛ս պատասխաներ... այդ լռութիւնդ... բայց խօսէ՛... Խրաքանչիւր վայրկեան մահ ևս տայ հոգւոյս։ Խօսէ՛, Ինչ վիշտ անակնկալ այդպէս ձեռքդ անձինդ դէմ գինած էր։

ԱՐՏԱՒԱՋԻ

Հանդարտէ՛ սիրտդ, սիրեցեալդ իմ Հելէնէ. միթէ հնար իցէ ինձ զրկել զիս քու աչացդ լուսն... դու ի՞նչ կենաք ես... սակայն փորձիլ ուզեցի ձեռքս... եթէ լիցի ինձ կորուսանել զքեզ... եթէ անակնկալ դէպք զոր անհնար է մահկանացուաց գուշակել... խորտակէ զմեզ իրաւուն միանցընող սիրոյ հանգոյցը, յայնժամ յուսահատութեանս մէջ... բայց ապահով եղիր։

ՀԵԼԷՆԷ

Ո՛հ, ինչ դժնդակ և աղէտալի խորհուրդք. զիս ապահովցընել ջանալդ՝ ես առաւել զիս կը տալանայէ։ Ինչու զիս պիտի խորսնցընես. Ինչ անակնկալ դէպք զքեզ այդ յուսահատութեան կէտը պիտի տանիր... աղէտ մը կը գուշակեմ հոս... անշուշտ կասկած մ'ունիս... բայց խօսէ՛... ա՛հ յայտնէ՛ ինձ վիշտդ Արտաւազդ։

ԱՐՏԱՒԱՋԻ (մեկուսի)

Ո՛վ դէք, ինչ պիտի ըսեմ։

ՀԵԼԷՆԷ

Կը հառաչես... ա՛հ մօրդ հոգւոյն, իւր սուրբ յիշատակին համար խօսէ՛, ըսէ՛ ինձ յուսահատութեանդ պատճառը, միթէ կը հրաժարիս զիս ալ մասնակից ընելու վշտացդ... ահաւասիկ իմ սիրտս ալ սրտիդ տալու հարուածովդ, արդէն կիսով չափ խոցեալ է։

ԱՐՏԱՌԱՋԻ

Մի՛ խոռովիր, սիրեցեալդ իմ Հելէնէ, փարատէ՛ կասկածդ... Բէ՛, կը տեսնեմ որ արդէն աշօղ արտառնալով կը լինան... Բայց ճնթաղաբութիւն մ'էր երկիրդ... հանդարտէ՛... կարեոր գործ մը զիս այժմ հօրս քովը կը կանչէ. թո՛ղ տուր սիրեցեալդ իմ Հելէնէ, որ առ այժմ մեկնեմ աստի՛ Սուրբ գետնէն առելով շտապաւ դուրս կ'ելլայ)

ՏԵՍԻՒԼ Զ.

ԼԵՆԻՆԻ (առանձին)

Ինչ հրաժեշտ, միթէ խոյս չը՞տար ինձմէ Արտաազդ. ինչ դէպք այդպէս տաղտուկ կ'ընեն իրեն իմ հոս ներկայութիւնս։ Այլ ինչ պաղ երակներուս մէջ թողոց մեկնելուն... Ինչ ցըրտութիւն. հագիւ թէ ինձ աշօ մը ձգեց և զայն մէկէն երկաթիւն վրայ կ'ուղղէր... Ինչ խառն և շփոթ պատասխան, որ փոխանակ զիս հանդարտեցնելու՝ ևս առաւել վրդովեց... միթէ չըտեսայ որ երկաթիւն սիրտն վարսելու կը փութար... թէ որ վայրկեան մ'աւ ուշ հասնէի իւր դիակը պիտի գտնայի... Իսկ ինչ վիշտ՝ ինձ անծանօթ՝ իրեն տաղտկալի կը ցուցնէ կեանքը։ Մինչև հիմայ վիշտ չէի ճանչնար... Բէ՛, հնազանդ ճիւղ որ երկթէ մագիւններով սիրտս կը քերէ... ահա առաջին անգամն է որ հետո անկեղծ է՛ Արտաազդ... Ինչ դաժան գաղտնիք լեզուն կողպած է այդպէս... խռոված էր, ես ալ խռոված էի. երէկ գիշեր անուրջիս մէջ է՛նմ գիտեր ինչ ահաւոր և դաժանատեսիլ ճիւղաք երևալովութեանս մէջ կը պարէին. մինչև ցոյս արիւն տեսայ, արեան լճի մը մէջ ես ալ հօրս հետ կը լողայի... երբ արթնեցայ, համատարած լուսթեան մէջ լսեցի որ գիշերահաւն մեր տանեաց վրայ դարձած տխուր կը ճուար... կը վազեմ հոս, որպէս զի սիրելոյս ծոցին մէջ գիշերուան զարհուրանքս մոռնամ... Ինչ տեսայ... փունտեղ չըղեգեբիմ հոս, վազեմ իւր ետէն, չ'ըլլայ թէ կրկնէ անձնատաշտութեան փորձը և շահամ իր քերէն խելու գիշերն յուսահատող գաղտնիքը։ (Երկամ վրայ իյնալով) Մե՛ծ դի՛ք, խլեցէ՛ք իւր սիրտն վիշտը, ձեռքը մահացու երկաթիւն, և մի՛ ընկղմե՛ք դուարթ օրերս յախտեանական սզոյ մէջ։ (Ելելով)

(Շարունակելի)

ՍԵՊՏԻՄԲԵՐԻ ՄԻՆԱՍԵՐԱՆ

ԱՆՆԵՐԵՆԻՑ

Անհղաղորդ շանթի հարուածն երբ լրտեսմ, Երէնվափառ կեանքի մը սուզը կու լամ. Ե՛ւ, ո՛ր ի՞նչ այդ ժանտափուտը, կ'ըտեմ, Արդեօք լափեց... վայելչագեղ մի չու շան... Հ. Գրս. Ա.

ՔԱԶԱՍԻՐՏ ԹԱԳԱՒՈՐԸ

Արտաազդի հաւատադրութեան առաւապելը, մինչև ցարդ ընդունուած է իւր իրականութիւն ամեն հին և նոր, պատմաբաններէն, որոց հիմունքն կը կազմեն Սուրբաբն և Պլուտարքոս։ Սիրիշներուն հետեւելով տոհմային երկու մեծ պատմաբաններն Հ. Մ. Չամչեանն և Հ. Յ. Գաթրընեանն, կուգան նոյն սխալ կարծիքն հիւրասիրելու իրենց գրուածոց մէջ, իրենց յատուկ գունձաւորումով, կարծես աւելի հաւատարկ ընելու համար Անտոնիոսի սուտակասպաս պատմիչներու կարկառած ստույթները։ Ընթերցողի աչքի առաջ կը դնենք երկու ընագիրներն, որպէս զի դիւրին լինի դատելու մեր գրածներու ոյժն և ճշմարտութիւնն։

Չամչեան պատմահայրն կը գրէ. «Արտաազդ արքայ Հայոց երկուցեալ յարաշաւանաց Անտոնիոսի, հրեշտակութիւնս առաքեաց առ նա, և հաստատեաց ընդ նմա հաշտութիւն խաղաղութեան, խոստացեալ նմա՝ նիզակակից լինել Հոռոմայեցոց։...

Չայս լուեալ Հոգաւորանոսի կայսեր, թէպէտ և հաճեցաւ ընդ հաշտութիւնն բայց քանզի ի ծածուկ թշնամացեալ էր ընդ Անտոնիոսի, զրեաց առ Արտաազդ, մի նպաստել նմա, որպէս է տեսանել առ Դիոնիէի, (գիրք. Խթ.) — Արտաազդ արքայ գառաջիւնն անդ ոչ կամեալով թշնամութիւն ցուցանել առ Անտոնիոս, իբրեւ կոչեցաւ ի նմանէ յօգնութիւն ընդդէմ Պարսից, եկն առ նա վաղվաղակի հանդերձ վեց հազար հեծելովք և եօթն հազար հետեակօր և Անտոնիոս ոչ ունելով կասկածանա ինչ զնմանէ, ընտրեաց զնա իւր առաջնորդ ճանապարհի և ինամատար գործոց պատերազմին։ Այլ քանզի չկամաւ Արտաազդ օգնել Անտոնիոսի, հնարս հնարեցաւ, և մեկնեցաւ ի նմանէ հանդերձ զօրօքն, հաւանեցուցեալ զնա անդրէն դարձուցանել զնոսա առ նա »։

Նոյնպէս և Հ. Յ. Գաթրընեանն կը գրէ.